

ՇՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՍԵՐԱՍՏԱՅԱՅԵՐՈՒ



ՍԵՆԵՔԵՐԻՄԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Միութեան կրիզ չկող օրինակները
անվաւեր են

*Ես
1918*



ԳՐԱԳՐԱԿԱՆ


ԵՐՄԵՆԱՆ ԱՋԷՄԵԱՆ

1919

ԾՐԱԳԻՐ . ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՍԵՆԵՔԵՐԻՄԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՍԵԲԱՍՏԱՆԱՅԵՐՈՒ



Յօդուած 1. — Սեբաստիոյ և շրջակայ գիւղերէն Հայեր վերակազմած են Պոլսոյ մէջ նախկին «Սենեքերիմեան Միութիւն»ը 1918 Դեկտեմբեր 29ին:

Ն Պ Ա Տ Ա Կ

Յօդուած 2. — Այս Միութեան նպատակն է.

ա) Սեբաստիոյ քաղաքի և գիւղերու ազգային, բարեսիրական, կրթական գործերու վերակազմութեան և բարգաւաճման նպաստել:

բ) Վերջին եղեռնին հետեւանքով ցիր ու ցան եղած հայրենակիցները փնտռել, գտնել և միացնել, նիւթապէս և բարոյապէս օժանդակել անոնց և ստուգել անոնց կրուստները:

գ) Անգործ մնացած հայրենակիցներու ըստ կարելւոյն գործ գտնել:

Այս նպատակին հասնելու համար պիտի կիրարկուին հետեւեալ միջոցները.

Մ Ի Զ Ո Ց Ն Ե Ր

Յօդուած 3.— Թղթակցութիւն.

ա) Միութիւնը կ'առանայ տեղեկատու նամակներ, խնդրագիրներ եւ այլն:

բ) Կը գրէ անոնց պատասխաններ, քընական նամակներ եւ այլն:

գ) Կոչեր կ'ուղղէ արտասահմանի բոլոր հայրենակիցներու նպատակով համար միութեանս նպատակին:

Յօդ. 4.— Դիմումներ:

ա) Միութիւնը կը դիմէ Պատրիարքարաններու, Ազգապետարաններու, Բարեգործական Միութեանց, Հայ Կարմիր Խաչի, կը խնդրէ անոնց աջակցութիւնը եւ համերաշխաբար կը գործէ անոնց հետ:

բ) Կը դիմէ քաղաքական մարմիններու, դրամատիրական եւ այլն ընկերութիւններու:

Յօդ 5.— Օժանդակութիւններ նիւթական եւ բարոյական:

ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Յօդուած 6. — Միութիւնը ունի հետեւեալ կազմը. անդամներ, ընդհանուր ժողով, փարչութիւն և օժանդակ-փարիչներ:

Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

Յօդուած 7. — Միութեան կրնայ անդամակցիլ այս Ծրագիր-կանոնագիրը ընդունող ամէն Սերաստացի կամ Սերաստաբնակ հայ:

Յօդ. 8. — Անդամակցելու համար պէտք է ստանալ փարչութեան հաճութիւնը:

Յօդ. 9. — Անդամակցութենէ կրնան դադրիլ. ա) կամովին բ) անդամներու թիւին երկու երրորդի պատճառաբանուած վճիռով: գ) երէք ամիս անդամավճար չտալու պարագային:

Յօդ. 10 — Անդամակցութենէ դադրողը ու է դրամական պահանջ ընելու իրաւունք չունի:

Յօդ. 11 — Միութիւնը կ'ընդունի նաև ոչ-Սերաստացիներու եւ օտարներու անդամակցութիւնը անոնց տալով պատուակալ տիտղոսը:

Յօդ. 12 — Պատուակալ անդամները ընտրելու և ընտրուելու իրաւունքը չունին:

Յօդ. 13. — Միուլթիւնը սիրով կ'ընդունի
դուրսէն ըլլալիք ունէ բարոյական և նիւթա-
կան օժանդակութիւն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 14. — Միուլթեան Ընդհ. ժողովը տեղի
կ'ունենայ կանոնաւորապէս երկու ամիսը
անգամ մը, անհրաժեշտ եղած պարագային
կրնան նաեւ գումարուիլ արտակարգ Ընդհ.
ժողովներ՝ վարչական ժողովի հրաւերով
կամ անդամներու թիւին առնուազն մէկ
երրորդին փափաքով:

Յօդ. 15. — Ընդհ. չժողովը բուէարկու-
թեամբ կ'ընտրէ իր ղիւանը, բաղկացեալ Ա.
եւ Բ. Ատենապետներէ եւ Ա. եւ Բ. Ատե-
նադպիրներէ:

Յօդ. 16. — Դիւանի պաշտօնաւարու-
թիւնը մէկ տարի է. դիւանը վերընտրելի է:

Յօդ. 17. — Ընդհ. ժողովին մէջ կը կար-
դացուին վարչական ժողովի գործունէու-
թեան տեղեկագիրները:

Յօդ. 18. — Ընդհանուր ժողովն է Միու-
լթեան բարձրագոյն մարմինը:

Յօդ. 19. — Յօդուած 2ի ա) նպատակը
անփոփոխելի մնալու պայմանաւ, կրնայ
Ծրագիր-կանոնագրի որ եւ է փոփոխութիւն
կատարել անդամներու ամբողջ թիւին եր-
կու երրորդի հաւանութեամբ:

Յօդ. 20. — Կ'ընտրէ վարչութեան անդամները:

Յօդ. 21. — Ընդհ. ժողովը օրինական է երբ ներկայ են անդամներու թիւին առնուազն կէսէն մէկ աւելի: Երբ առաջին հրաւերին վրայ այս թիւը չի գոյանայ երկրորդ հրաւերով գումարուած ժողովը օրինական է երբ ներկայ են անդամներու թիւին մէկ երրորդը:

Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ի Ի Ն

Յօդ. 22. — Վարչութիւնը կը բաղկանայ տասներ մէկ անդամներէ, որոնք վերընտրելի են, կը պաշտօնավարէ տարի մը:

Յօդ. 23. — Վարչութեան անդամներէն ունէ պատճառով մնայուն կերպով բացակայող ըլլալու պարագային անոնց կը յաջորդեն ընտրութեան ատեն մեծամասնութիւն շահողներէն առաւելագոյն բուէ ստացողները:

Յօդ. 24. — Առանց բանաւոր պատճառի վարչական ժողովի երեք յաջորդական նիստերէն բացակայողը վարչութեան անդամակցելէ կը դադրի:

Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ե Ա Ն Գ Ո Ր Ծ Ե Ր Ն Ե Ն .

Յօդ. 25. — Ընտրել իր Ատենապետը, Ատենադպիրը և Գանձապետը:

Յօդ. 26.— Վարել Միութեան գործերը Ծրագիր - Կանոնագրի և Ընդհ. ժողովներու որոշումներու համաձայն:

Յօդ. 27.— Կեդրոնացնել մասնաճիւղերու դրամի վերաբերեալ տեղեկութիւնները

Յօդ. 28.— Պատրաստել Միութեան ընդհ. գործերու տարեկան համարատուութիւնը եւ ներկայացնել ընդհ. ժողովին:

Յօդ. 29.— Միութեան անունով կալուածներ գնել կամ ծախել: Բայց ուէ կալուածի գնման կամ վաճառման համար Վարչութիւնը պարտաւոր է ընդհ. ժողովի արտօնութիւնը ստանալ:

Յօդ.— 30. Պատրաստել Ընդհ. ժողովներու օրակարգը:

Յօդ. 31.— Վարչական ժողովը կը գումարուի շաբաթը անգամ մը և ի պահանջել հարկին Ատենապետի հրաւերով աւելի գումարումներ ալ կրնայ ունենալ:

Յօդ. 32.— Պաշտօնական գրութիւնները պիտի կրեն Միութեան կնիքը, Ատենապետին և Ատենազալիրին ստորագրութիւնները:

Յօդ. 33.— Տասը օսմ. ոսկիէ պակաս գանձումներուն ստացագիրները կը կրեն միայն Գանձապահին ստորագրութիւնը: Աւելի գումարներու ստացագիրները կը կրեն նաև Վարչութեան ղիւանի ստորագրութիւնները:

Յօդ. 34.— Ընթացիկ գործերու համար Գանձապահը կրնայ իր մօտ պահել առ առ առաւելն 50 օսմ. ոսկի, մնացածը պահ տալով վարչութեան կողմէ որոշուած դրամատան մը մէջ ընթացիկ հաշուով:

Յօդ. 35.— վարչութեան բոլոր անդամները հաւաքաբար պատասխանատու են Ընդհ. ժողովին՝ Միութեան բոլոր գոյքերուն և դրամներուն համար:

Օ Ժ Ա Ն Դ Ա Կ Վ Ա Ր Ի Չ Ն Ե Ր

Յօդ. 36.— Ամէն գիւղ որ 10է աւելի անդամ ունի, իրաւունք ունի օժանդակ վարիչ մը ընտրել որ ներկայ կը գտնուի վարչութեան ժողովներուն, թելադրութիւններ կ'ընէ մասնաւորապէս իրեն համայնքին մասին, առանց ձայն ունենալու տրուած որոշումներու մէջ:

Ե Կ Ա Մ Ո Ւ Տ

Յօդ. 37 — Իւրաքանչիւր անդամակցողի մուտքի դրամը առնուազն 1 օսմ. ոսկի:

Յօդ. 38.— Իւրաքանչիւր անդամի ամսավճարը առ նուազն 25 դրշ. փափաքողները կրնան կանխիկ վճարել վեցամսեան, կամ տարեկանը:

Յօդ. 39.— Տոկոսներ և եկամուտներ,
պահեստի գումարներէ և գոյքերէ:

Յօդ. 40.— Նուիրատուութիւններէ,
թատերական ներկայացումներէ, երեկոյթ-
ներէ, վիճակահանութիւններէ, կայն գո-
յացած հասոյթներ:

Հ Ա Յ Տ Ա Տ Ո Ւ Յ Ի Ի Ն

Յօդ. 41.— Միութիւնը կ'ունենայ գրա-
սենեակ մը Պոլսոյ մէջ և ի պահանջել հար-
կին մասնաճիւղեր Սեբաստիոյ և արտասահ-
մանի մէջ:

Կ Ն Ի Ք

Յօդ. 42.— Միութիւնը կ'ունենայ իր
կնիքը «Սեբաստահայերու Միներբերիմեան
Միութիւն 1918» մակագրութեամբ, կը պահ-
հուի վարչութեան դիւանին բով:

Յօդ. 43.— Միութիւնը կը լուծուի երբ
անդամներու թիւը 25էն պակաս է և կամ
անդամներու երկու երրորդին վճիռով:

Յօդ. 44.— Լուծման պարագային Միու-
թեան ամբողջ ունեւորութիւնը յանձնուի Հայ
Գարմիր Խաչի Գեղրոնի վարչութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0319271

722

835

